# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՈՐՈՇՈՒՄ № 09Լ

### ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Հաստատել քրեական, քաղաքացիական և վարչական գործերով 2017 թվականի դատական պրակտիկայի ուսումնասիրման և ամփոփման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի ղեկավարին՝ սահմանել 2017 թվականի դատական պրակտիկայի ուսումնասիրման և ամփոփման ժամանակացույցը:

**Հայաստանի Հանրապետության**
**դատարանների նախագահների**
**խորհրդի նախագահ** **Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**

**2017թ. փետրվարի 27**
**ք. Երևան**